

Այսը չորս անգամ էլ հրատարակի
Սպորաֆրո-Բեան Գեղն է Իմաճ-
ն Աստի Խան Ժարի Երեւն :



Տարեկան գինն է Կանխի շէշ 120 *
Դո-րսերէն Բաժանորդ եղողն է-
բը Ժողովի Զարեալ Վարեւո- Էն :

ՀԱՆԴԻՍ ՈՒԹՕՐԵԸՅ

12 ՅՈՒԼԻՍ

Բ. ՏԱՐԻ 1862

ԹԻԻ 28

ԴԵՍՏՐԵԲԵԿ ՈՒԹՕՐԵՆ

Տես Թիւ 17

Քիչը գական զաստիարակութեան համար
ամենէն կարեւոր ժամանակը՝ տղուն ծնած
օրէն մինչև յարբուս հասնելուն ժամա-
նակն է : Աս ժամանակը՝ տղուն ապագայ
կեանքին համար նախապատրաստական
ժամանակ մըն է . . . և անոր ունենալու
զաւկին վրայ ալ մեծ ազդեցութիւն ունի :
Աս ժամանակը ուրիշ բանի մը ժամանակ-
ներու կը բաժնուի . առաջինն է՝ տղուն
ծնած օրէն մինչև երկրորդ տարին , կամ
մինչև առջի առաջնաճանութիւնը ասիկայ
կը կոչենք Մանկութիւն : Երկրորդն է՝
երկու տարուրէն մինչև եօթներորդ տա-
րին , կամ մինչև երկրորդ առաջնաճանու-
թիւնը , ասիկայ ալ Տղայութիւն կը կո-
չենք : Երրորդն է՝ եօթը տարուրէն մին-
չև ջրթափութեան ատենը , ասիկայ ալ
Պատանեկութիւն կը կոչենք : Չորրորդն
է՝ ջրթափութենէն մինչև կատարեալ ա-
ճումը , կամ մինչև ամուսնականութեան
ժամանակը : Աս ժամանակներուն վրայ
մանրամասն խօսելէ առաջ , կ'ուզենք՝ բա-
նի մը ընդհանուր գիտողութիւններ ընել ,
և նախ երկայնակեցութեան վրայ խօսինք :
Հաւանական չէ որ մարդուս կեանքը
ժամանակին հետ երթալով կարճցած ըլլայ
աւելի մտքի մօտ է ենթադրել թէ ծննդոց
գրքին մէջ ջրհեղեղէն առջին հապետնե-
րուն յիշուած տարիները՝ մեր տարիներէն
աւելի կարճ տևողութիւն մը ունեցող ժա-
մանակի միջոցներ կը նշանակեն : Սովորա-

բար կը տեսնենք որ մի և նոյն բառն այլ և
այլ ազգաց մէջ տարբեր տարբեր նշանա-
կութեամբ կ'առնուի . մի և նոյն ազգի մէջ
անգամ այլ և այլ ժամանակ բառ մը նշա-
նակութիւնը կը փոխէ : Օրինակի համար
Անգղիացիք ու Գերմանացիք տեղեաց հե-
ռաւորութիւնը մղանով կը չափեն , բայց
յայտնի է թէ մէկ Գերմանական մղանը՝
վեց Անգղիական մղանի չափ է : Այսպէս
կրնայ ըլլալ որ ան վաղեմի ժամանակնե-
րուն մէջ քաղի բառը աւելի կարճ ժամա-
նակի միջոց մը նշանակած ըլլայ . բան թէ
մեր տարին : Մարդիկ , չորքոտանիներու
պէս , բնութեան վիճակին մէջ ջրթափու-
թեան ժամանակին հնդապատիկը կամ վեց-
պատիկը կ'ապրին , օրինակի համար ենթա-
դրելով թէ ջրթափելու ժամանակը 15 է-
րորդ տարին է , հինգ կամ վեց անգամ
15ը կ'ընէ 75 կամ 90 տարի . ուստի մար-
դուս բնական կեանքին տևողութիւնն այս-
չափ է . բոլոր չորքոտանեաց մէջ առանկ
է , և երեք հազար տարի առաջ մարդոց
վկայութեանը նայելով կը տեսնենք թէ
բնական մահուամբ կամ ծերութենէ մեռ-
նող մարդիկ 90 տարուրէն աւելի չէին
ապրեր , և այսօրուան օրս ալ այնպէս է :
Պատճառ չունինք ըսելու թէ հրէից հա-
մար աս ընդհանուր բնական օրէնքէն բա-
ցառութիւն մը եղած էր , մանաւանդ որ
կը տեսնենք թէ առ հասարակ կենաց կար-
ճութեան պատճառը մարդոց արհեստա-
կան կամ բռնի միջոցներն են մանաւանդ ,
բան թէ ստեղծագործութենէն մինչև հի-
մայ եղած ժամանակին ընթացքը : Վեր-
ջապէս ծննդոց գրքին յիշած չափազանց

երկայնակեցութիւնը ան նահապետներուն համար բնական կամ գերբնական պատճառէ յառաջ եկած բացառութիւն մը ղենելու ալըլանք, տակաւին հաւանական չէ ըսել թէ որչափ աշխարհք յառաջ կ'երթայ, այնչափ մարդոց կեանքը կը կարճընայ. քանզի եթէ ասանկ ըլլար, հազար տարուան վերջը մարդոց կենաց օրերուն մէջ նշանաւոր տարբերութիւն պիտի տեսնուէր. ուր հիմայ գիտենք թէ հազար տարի առաջ մարդիկ մենէ աւելի չէին ապրեր:

Երկայնակեցութեան ամենէն գլխաւոր և կարեւոր պատճառներէն մէկը մարմնոյ բնածին կաղմութիւնն է: Աս մասին վայրենիները քաղաքակիրթ ազգերէն աւելի բազմաւոր են: Վայրիներուն առողջութիւնն աւելի տեսական է, քանզի անոնք քաղաքակիրթ մարդոց պէս շատ մը մարմնոյ և մտաց անկարգութիւններու ենթակայ չեն:

Գարձեալ բարեխառն ու խիստ տաք օդէն աւելի ծերանալու կը նպաստէ: Սաստիկ տաքը գործարանաւոր մարմնոց գործողութեանը բնական շրջանները կը փութացնէ, և զանոնք շուտով մահուան կը տանի: Մաքուր, չոր և զով օդը, մարմնոյ և մտաց բոլոր կարողութիւններուն չափաւոր կրթութիւնը, ընդհանրապէս ազէկ ֆիզիքական դաստիարակութիւն, և Խորի հանդարտութիւն, ասոնց ամենն ալ երկայնակեցութեան նպաստաւոր են: Ընդհակառակն, հիւանդ ըլլալու 'ի բնէ տրամադրութիւն ունենալը, վատառողջ կաղմութիւն, բարեխառնութեան մեծ և յանկարծ փոփոխութիւն, անժուժկալութիւն, մարմնոյ շարժման պակսութիւն, վնասարար զբաղմունք, մտաւոր կարողութիւնները չափազանց յոգնեցնել, անանկութիւն, վատառողջ կերակուր, բաւական հանգիստ չունենալ, ամեն տեսակ տկարացումը ազդեցութիւններ, կիրքեր, մանաւանդ անհաճոյ կիրքեր, զորօրինակ՝ նախանձ, մախանք, երկիւղ, թախծութիւն, և ուրիշ ասոնց նմաններ, առողջութեան աղետալի են:

Բնութիւնը ընդհանրապէս անանկ ազ-

դեցութիւն մը ունի, որով կարծես թէ կենդանեաց տեսակները, նաեւ իւրաքանչիւր անհատ կ'ուզէ պահել, բնութեան աս զօրութիւնը՝ Վի Իսսպիտ կամ Վի Դեպիտարիտ նախորէ, այսինքն՝ ստեղծիչ կամ բուժիչ զօրութիւն բնութեան կողմէ առաջ է: Բնութեան աս ջանքը թէ առողջ և թէ հիւանդ վիճակի մէջ կը տեսնուի: Բայց և այնպէս որչափ ազդու ըլլայ բնութիւնը, որչափ նպաստաւոր ըլլան ուրիշ պարագաներ, տարիքներու, ինչպէս այրութեան, ծերութեան, իրարու յաջորդութիւնը չի կրնար արգելուիլ, ուստի վերջապէս ծերութիւնն ու մահ է: Ֆիզիքական դաստիարակութիւնը կրնայ տարբերութիւն ընել, բայց արարչին անփոփոխ օրէնքները չի կրնար ջնջիլ:

Մարդու մարմնոյն վրայ արտաքին պարագայներէ յառաջ եկած փոփոխութիւնները մասնաւոր մտադրութեան արժանի են: Տունկեր ու անասուններ որոնք տարբեր տարբեր կլիմաներու տակ կ'ապրին, օտար կլիմայի ազդեցութենէն մեծապէս կը փոխուին: Հարաւային երկիրներէ դէպ 'ի հիւսիս փոխադրուած պրտոյ ծառից՝ մի և նոյն տեսակ պտուղը կը բերեն, բայց շատ մեծ տարբերութիւն: Գաղղիոյ խաղողն՝ Անգղիոյ խաղողէն գերազանց է:

Այսինքն միտ դրած էր թէ երկրի մը տունկերն ու անասունները մի և նոյն ձևն ունենալու հակամետ են, հաւասարապէս երկայնագոյն կամ կարճագոյն են, նրբագոյն կամ ստուարագոյն: Ար յաւելունք թէ ոչ միայն տունկերն ու անասուններն, այլ մարդիկ ևս նոյն տրամադրութիւնն ունենալու ենթակայ են. զոր օրինակ Անկիւրիա ուր անասուններուն, զոր օրինակ այժու ու կատուի մազերը երկայն կ'ըլլան, մարդոց ալ մօրուքը երկայն կ'ըլլայ: Ան երկիրներու մէջ ուր մարդագեղաններուն խոտերը երկայն կ'ըլլան, ոչ խարն ու արջառն ալ բարձրահասակ կ'ըլլայ, և ընդհանրապէս անասուններուն մէկ անդամը, զոր օրինակ ունչը կամ ցուկը երկայնաձև է:

Ֆիզիքական դաստիարակութեան ազ-

եթէ կանոնաւորութիւն, աւելի օգտակար կրնան ըլլալ: Եւ արդէն փորձուած ու հաստատուած է որ ասոնք ոչ միայն մարմնոյ կազմութեանը ընդհանրապէս, այլեւ մարմնոյն աս կամ ան մասին նպաստաւոր են:

Աս մասին մեր գիտութիւնը գոհացուցիչ չէ. բայց եւ այնպէս ամեն մարդ աս խորհրդածութիւններուն կարեւորութիւնը կ'զգայ:

Ս Պ Ե Ն Ի Ը

Տես Թիւ 25

Սպանիոյ արտաքին գործոց պաշտօնեայ Օ. ապալա զօրապետին բոլոր քաթոլիք տէրութեանց դեսպաններուն ուղղած շրջաբերականը:

«Սրբազան հօրը մեր կառավարութեան քով ունեցած դեսպանը՝ Թագուհւոյն կառավարութենէն իր անցապիւրն ուղեւոր առաւ, եւ արտօնօք Սպանիայէն մեկնեցաւ: Ասանկ ծանր որոշում մը Սպանիոյ կառավարութեանը խորին հիացում մը պատճառեց, քանզի Սպանիոյ կառավարութիւնն իրեն յանձնուած քաղաքական ծանրը շահերուն ներածին չափ Հռոմայ դահուն սիրոյ եւ բարեկամութեան ամեն ապացոյց տուած ըլլալէն ետքը Հռոմի կողմէ ասանկ վարմունք մը տեսնել չէր յուսար: Բայց Սպանիոյ կառավարութիւնն ամենէն աւելի վշտացնող բանը Պապին Մատրիտ քաղաքէն դեսպանին կառավարութիւն տրուած ծանուցագիրն է որուն մէջ դեսպանն իր անցագիրն ալ կը խնդրէր: Աս ծանուցագիրն մէջ կ'ըսուի Թէ Սրբազան Հայրը իր դեսպանը ետ կանչելու ստիպուած է, «քանզի Սպանիոյ մէջ այնպիսի անցքեր անցան որոնք կրօնքի ու Եկեղեցւոյ դէմ են», եւ Սպանիոյ կառավարութեանն ու Սուրբ Գահին մէջ տեղը հրապարակաւ հաստատուած դաշտնց հակառակ են»:

Պապին Սպանիոյ կառավարութեան դէմ ըրած աս գանդատն ու այնպէս անակնկալ կերպով իր դեսպանը ետ կանչելը տեսնելով Սպանիոյ կառավարութիւնն ուրիշ բան չուզեր ընել, եթէ ոչ իր վարմունքը բոլոր

քաթոլիք տէրութեանց առջին ղենել:

Աս առջին անգամ չէ որ Պապն իր տնտեսական եւ քաղաքական վեճերուն կրօնական կերպարանք տալով՝ մեր տէրութեան հպատակներուն խիղճը ոտք կը հանէ, ու այսպէս կառավարութեան գլխուն ծանր ծանր դժուարութիւններ կը յարուցանէ: Բոլոր աշխարհի ալ յայտնի է որ Սպանիոյ կառավարութիւնը մինչեւ ցայսօր Հռոմէական կրօնքին դէմ բան մը ըրած չէ, ըստ որում ոչ հաւատոյ մասանց, ոչ ալ Եկեղեցւոյ վարդապետութեանցը ամենափոքր փնաս մը հասուցած ունի: Ասոնք այսպէս ըլլալով Սպանիոյ կառավարութիւնը վերոյիշեալ ծանուցագիրն մէջ պարունակուած ծանր ամբաստանութիւնները յայտնի ու բացէ 'ի բաց հերքելու եւ ջրելու կը պարտաւորուի: Աս հերքումէն ետքը՝ Հռոմի վարմունքն աշխարհիս աչքին որչափ պարօտելի պիտի երևնայ. մանաւանդ որ Հռոմ Սպանիոյ ժողովուրդին կառավարութեան դէմ այլ եւ այլ ամբաստանութիւններ հաւտացնելով՝ կարգաւորութեան թշնամիներուն թերակղզւոյն հանդարտութիւնը խռովելու առիթ տուաւ. եւ աս երկրին մէջ ժառանգութեան պատճառաւ 'ի վաղուց եղած դժուարութեց վրայ նոր դժուարութիւն ալ աւելցուց: Հռոմ այսպէս ընելուն համար պատմութեան դատաստանին առջեւ չէնք կարծեր Թէ դիւրաւ կարող պիտի ըլլայ արդարանալ: Անոր խռոված ու փտանդի ենթակայ ըրած երկիրն անանկ երկիր մըն է որ մինչեւ ցարդ քաթոլիք կրօնքին պատուէրներուն անվրէպ հնազանդած, եւ հռոմի համար այնչափ բաներ ըրած է որ, եթէ ոչ սերտ բարեկամութեան դէմ կիրքէ ազատ պարզ արդարութեան մը արժանի էր:

Սպանիոյ կառավարութիւնը քաթոլիք կրօնքին ու Եկեղեցւոյն դէմ յանցաւոր չեղած ըլլալն ապացուցանելէ ետքը, պիտի ապացուցանէ եւ Թէ 1851ին դաշնագիրն ալ աւրած չէ, եւ աս ցուցնելու համար իր բռնած ընթացքը դաշնագրին պայմաններուն հետ պիտի համեմատէ: Հռոմի ու Սպանիոյ կառավարութեան մէջ տեղն եղած ամենէն կարեւոր եւ ամենէն աւելի

աս շնորհովն ըրած են. և 1845 էն ՚ի վեր ասիկանակ օրէնք եղած է. քանզի ան տարին հրատարակուած Պատժական օրէնքը երեք անգամ այլեայլ յօդուածներով և այլեայլ ձևերով որոշակի հաստատած է, սա սկզբունքը թէ ամէն մարդուն խղճմանքն ազատ է, ուստի տարբեր կրօնք կամ դաւանութիւն ունենալուն համար մարդ պիտի չհալածուի. պիտի պատժուի միայն որ և իցէ օտար դաւանութիւն, բայց ՚ի քաթօլիք դաւանութենէն հրապարակական դաւանութիւն չպիտի ըլլայ:

Աս արտօնութիւնը 1851ին դաշնագրին առաջին յօդուածին հակառակ չէ, ուր ըսուած է թէ « քաթօլիք, առաքելական և հռոմէական կրօնքն՝ այսուհետեւ ալ Սպանիոյ ազգին մի միայն կրօնքը պիտի ըլլայ. քանզի քաթօլիք կրօնքին Սպանիոյ ազգին մի միայն կրօնք ըլլալը Սահմանադրութեան մէջ ալ հաստատուած է, բայց միթէ աս կէ կը հասկցուի թէ Սպանիոյ մէջ տարբեր կրօնք ունեցող մը պիտի չգտնուի, և թէ գտնուելու ըլլայ պատժուելու կամ հալածուելու է: Դաշնագրին նոյն յօդուածին երկրորդ մասը կ'ըսէ, « Սպանիոյ բոլոր երկիրներուն մէջ քաթօլիք կրօնքը պիտի վայելէ ան ամեն իրաւունքներն ու արտօնութիւնները զորոնք վայելել, ըստ աստուածային օրինաց և ըստ եկեղացական կանոնաց իրեն իրաւունքն է »: Աս մասն ալ խղճմանքի ազատութեան ամենեւին հակառակ չէ. քանզի քաթօլիք կրօնքին ամեն կերպով ազատութիւն և արտօնութիւն վայելելէն չի հետեւիր թէ ուրիշ որ և իցէ կրօնքի կամ դաւանութեան դադտնի ազատութիւն անգամ տրուելու չէ:

Հռոմի հետ եղած դաշնագրին մէջ Սպանիոյ կառավարութիւնը կանանց վանքերու համար օրինաւոր պայմաններ դրած էր. ուստի դաշնագրէն ետքը կառավարութիւնը՝ կանանց վանքերուն մէջ նորընծայ ընդունիլն արգիլեց, մինչև որ ան վանքերը դաշնագրին պայմանները կատարեն:

Նոյնպէս յիշեալ դաշնագրին մէջ հաստատուած էր որ կղերին թուոյն և վիճա-

կին նկատմամբ նոր կանոնադրութիւն մը պիտի շինուէր, ուստի դաշնագրէն ետքը կառավարութիւնը նոր եկեղեցական ձեռնարքէն առ ժամանակեայ կերպով արգիլեց, մինչև որ յիշեալ կանոնագիրն հաստատուէր:

Հռոմ աս արգելքներուն դէմ կրօնքի և եկեղեցւոյ դէմ բռնաբառութիւններ են ըսելով բողոքեց: Բայց աս բողոքին ապօրինաւորութիւնն ու կառավարութեան արգելքներուն արդարութիւնը հասկնալու համար՝ նախ դաշնագրին պայմանները մէջ կը բերենք, ետքն ալ ան պայմաններուն կատարմանը նկատմամբ հռոմի կողմէն եղած զանցառութիւնն, ու կառավարութեան համբերութիւնն ու խոհեմութիւնը:

Դաշնագրին 30երորդ յօդուածը կ'ըսէ. « հաւատաւոր կանայք (մայրապետներ կամ կուսանք) այնպէս պիտի ըլլան, որ հայեցողական կենաց հետ՝ գործնական կենաց ալ զբաղին. զորօրինակ՝ հիւանդաց ծառայելու, կամ այլիկ տղաք կրթելու, և կամ ուրիշ ասոնց նման բարեպաշտական և օգտակար գործերու »: Ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ. « կանանց վանքերու մէջ հաւատաւորաց գործը պիտի ըլլայ՝ հայեցողական կենաց հետ աղջկանց դաստիարակութեան և ուրիշ մարդասիրական գործերու հոգը միացնել »: Ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ, « Մինակ ան վանքերուն մէջ նորընծայ ընդունելու թոյլտուութիւն է, ուր եպիսկոպոսունք դաստիարակութեան և մարդասիրական գործերու կրթութիւնն ընել կուտան. անանկ գործեր՝ որոնց նորընծայ մայրապետներն օր մը ՚ի պաշտօնէ պիտի զբաղին »:

Աս խօսքերէն յայտնի է թէ ըստ դաշնագրին Սպանիոյ մէջ լոկ հայեցողական կենք ունեցող վանքեր օրինաւորապէս չկարենային կենալ. ուստի և դաշնագրին հրատարակուելէն ետքը՝ աս տեսակ վանքեր կամ իրենց կերպը պիտի փոխէին, և կամ բոլորովին ջնջուելու էին: Բայց և

* Լոկ հայեցողական կենաց զբաղող վանքեր անոնք են, ուր, կրօնաւոր կամ կրօնաւորուհի, միակ կ'ուտեն կլիման ու աղօթք կ'ընեն. ուրիշ ուսումնական կամ մարդասիրական գործերու չեն զբաղիր:

վեր՝ կառավարութիւնը կը տառապէր ու կը ջանար որ յիշեալ ժողովրդապետական կանոնադիրը վայելուչ կերպով գլուխ հանուէր. բայց մինչև ցայսօր կատարել անկարելի եղաւ. կառավարութեան բոլոր ջանքերը վայրապար կ'ըլլային, բանզի Հըռոմ աս մասին ան հոգւով ու եռանդով չէր աշխատեր, ինչպէս որ դաշնագրին մէջ իրեն նպաստաւոր եղող կէտերուն գործադրութեանը համար աշխատեցաւ :

Ըս միջոցին ձեռնադրութիւնները կը բազմանային, հարկաւորութեան նայող չըկար, մանաւանդ թէ երբեմն հասարակաց յայտնի ֆնասակար ըլլալը ճանչցուելով ալ ձեռնադրութիւնները կ'ըլլային : Վերջապէս ալ կառավարութիւնը չէր կրնար համբերել. հարկ եղաւ որ իրաց աս վիճակին վախճան մը տայ, ու, ձեռնադրութիւններն արգիլելով, դաշնագրին 24 յօդուածին գործադրութեանը սկսի : Ասիկա դաշնագիրը եղծանել չէր, այլ մանաւանդ անոր պայմանները կատարել էր. և ոչ միայն կրօնքին և տէրութեան դէմ ֆնտաւար մը չէր, այլ ընդ հակառակն կ'արգիլէր որ ասանկ կարեոր կէտի մը մէջ երկուքին ալ պայծառութեանը նսեմութիւն չբերուի :

Հարունակութիւն :

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

— Ընթերցողք կը յիշեն անշուշտ Մեղուի մէջ Արարատեան Սերովբէ վարդապետի վրայօք եղած վստահամբաւութեան երկար քստմենքի և ոչ քրիստոնէական յօդուածը. և ատանկ հայհոյակց գրութեան մը սկզբնաղբիւր և ապացոյց՝ Գալուստ Պօղոսեան ստորագրութեամբ մէկ նամակ մը ըլլալը. մենք այդ նամակին վրայ առանց մանրամասն դիտողութեանց՝ սա միայն կը խորհինք թէ՛ այդ ոճով նամակ մը շարադրել կրցող անձ մը արեւելքի մէջ ժամկոչութիւն կ'ընէ՝ և ոչ վարժապետութիւն. աս ալ մեր ազգին համար, նորալուր բան կրնայ համարուիլ : Գանք հիմայ՝ Գալուստ Պօղոսեան մեր 35 տարեկան նորընծայ մատաղ երիտասարդին՝ մէկ ուրիշ նամակին. որուն վրայօք սոսկապէս մեր ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրենք :

« Ըրժանաւոր սուրբ հարկիս մախսուս սուրբ ձեռքըթ կը պաքնիմ աման իմը և քսքի՛ կըռնամ ըսեր ուրիշը ինծիս չի կըռնար անգամեր բեզ մեզատ լաքին երրածիս այս եղու մեծ խապիւթ մը երի բեզի բերնեղս երսելու չիկընայլ երսելուս համար գիրովըսկիմաց ընիմ իմ ճարըս բեզմէ կը խընթըրեմ էյրէկիօրը հաճի. . . ք թպրատունէն ինծի կանջեց եազըճին տունը տարայ որ ես պեճէկ կը եմէի եէս գործօւնիմ երսինէ թէզ մը եկո կընա երսաւ ես էլաքացիօր պախճաճուկի Մ. . . ին պղտիկ տղան հոնի էր ներսը մըտանէ նըստէտէի տեղ երբին եազըճին հետ երեքը մեկտեղ խրատեցին ինծի երսել տունին քի սերօբէ վարդապետին համար ասանկ պիտի երսես տէի բերնէս իմղա ուղեցին. եսալ ատինջ խոսկէ օր ինծի կըսէք աս խօսքը ես առաջ ալ իմացա ատ սուտ բան է սուտ երլլալուն համար եէս իմղա կուտիմ երսինէ ատբերա նետբոխէ ըսին որ քեզի բարրա տայնը ըսին տըված իմզէդ մի վախնար քեզ կազատինք ըսին հասըլըին չեըլին երբին խաբեցին իմզաս մինակ տըրի լաքին աս քըշեր քուէ ջիդը նացայ մըտմուտուքէս ինչու որ աստուծոյ ծառայն իֆդիրայեցի հասկըցա որ երսել տվածնին ինծի քէշ պիտի էլա թէ որ խըրատ մը ջի տաս դեզէն պիտի էլամ իմ ճարըս տեսնաս » :

Ն. Ծ.

Գալուստ Պօղոսեան :

Սենք ոչ ջաղացպան ենք և ոչ ջաղացք ունինք, ուստի՝ ալիւրը սպիտակ է եղել կամ սև ատկէ մեզ ի՞նչ փոյթ : Բայց ազգային վարչութեան արդարադատութիւնը վրայ ունեցած վստահութիւննիս առ այժմ մեզ լուել կուտայ այս մասին, որպէս զի առանց նախապաշարուելու՝ իւր անաչառ դատողութիւնը ժամ յառաջ իմացնելով ճրիւ և ապօրինաւոր սպաննուած մը օրինօք մեռցնէ կամ կենդանացնէ :